

ԹԻՖԼԻՍ. Քամալեանց Ս.—Ձեր յօդուածը մեզ հասաւ, երբ այս համարը գրեթէ պատրաստ էր. լոյս կտեսնի հետեւեալում: ԷՉՄԻԱԾԻՆ. Կ.—Ձեր յօդուածները ստացանք և կպատասխանենք նամակով.

ՊԱՐԻՋ. Ա. Զ.—Բոլորը կտնօրինուի Ձեր ցանկութեան համեմատ:

Կ. ՊՕԼԻՍ. «Երկրորդ Պահլաւունիք»-ի միւս մասը ստացանք և լոյս կտեսնի միւս անգամ:

ԹԻՖԼԻՍ. Ա. Ծ.-Ե. Վոյնիչի «բող» վէպը հնարաւորութիւն չունիք հրատարակելու «Լուսնայի» էջերում:

ԲՐԻԻՍՍԷԼ. Տ. Վ.—«Ջէկի» և «որբիկը» ֆրանսիականից թարգմանութիւնները ստացանք և շուտով կտպենք: Իսկ մեծահատոր թարգմանութիւնների մասին նամակ կգրենք:

ԹԱԻՐԻՋ. Ատ. «Վիշապ» ը ստացանք և կտպենք հետեւեալում:

ԵՐԵՒԱՆ. Ա. Տ.-Պ.—Ա.-Դօի փոքրիկ բրօշուրը, որ «Լուսնայ»-ի անցեալ համարում մեր աշխատակից պ. Բրիչը արդէն գնահատել էր ըստ արժանւոյն, չարժէր նորից ուշադրութեան առնել. բայց Ձեր յօդուածը այնպիսի դառն ճշմարտութիւններ է պարունակում, որ մենք տեղ տուինք և Ձեր մատենախօսութեան այս համարում:

ՄՈՍԿՈՒԱ. Մ. Շովրեան.—Ձեր հետաքրքրութեան արժանի յօդուածը ուշ ստացանք, ուստի և մնաց յաջորդ համարին:

ԲԱԳՈՒ. Հ. Իս.—«Յիշատակ» բանաստեղծութիւնը ստացանք:

ՇՏՐԱՍԲՈՒՐԳ. Խոստուկ.—Ձեր բանաստեղծութիւնը միւս համարում:

Մ. ՅՈՎՆԱՆԵԱՆ.—Ստացանք «Մի յար կենդանի խնդիր» յօդուածը. կտպենք:

ՊԱՐԻՋ. Ռ. Քաջբերունի.—Ժիւլ Պէյոյի «կամքի կրթութիւնը» ստացանք: Ձեզ նամակ կգրենք:

ՇՈՒԼԱԻՐ. Գր. Բալասանեան.—Ձեր պօէման ստացանք. երկար է, դժուար թէ տեղ ունենանք դորա համար. կկարդանք և կպատասխանենք:

Կ. ՊՕԼԻՍ. * *—Ձեր թղթակցութիւնը փոստը այժմ միայն յանձնեց մեզ. չգիտենք ինչձեւ ամիսներով պահելով իւր մօտ: Յաւում ենք, որ մնաց միւս համարին: Նորա մէջ արտայայտուած մտքերին մենք բոլորովին համամիտ ենք, բայց ամբողջութեամբ տպելը գիտէք որ անկարելի է: